Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 532

ՀԻՆԳՇԱԲԹԻ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1885 (Ն. Տ.) 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1885

12 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1303

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ.
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ
Գալաթիա, Նորատունկեան-խան

نورادونكيان خانه‌سى غلطه‌ده شرقيه‌ده
غزته‌سى ادارهسنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	գահեկան արծաթ	200
» »	Վեցամսեայ	» »	100
» »	Եռամսեայ	» »	 50
Գաւառաց եւ տեղական թղթատարով	տարեկան	» »	240
Գաւառաց հաւասար եւ տեղական թղթատարով	վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներ,	տարեկան	ֆրանք	 56
» »	վեցամսեայ	»	 28

Դուրս ղրկուած լրագրաց ճանրու ծախքը Տնօրէնութեան վրայ է։
Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ դրութիւն ետ չտրուիր։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԴԸՐՆ ԷՃԷՆՍԻ
Գոլշակալտրեան յեռամջ, Գարա-ութէջ, Տէյիրմէն-խան

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Եկեմտից Հոգաբարձութիւնն՝ որոյ ատենապետն է Ճանըմեան Մկրտիչ էֆէնտի՝ իւր երեկի նստին մէջ որոշեր է պատճառաբանեալ հաւաքական հրաժարական մատուցանել Խառն Ժողովոյ վաղուան նստին։

Մայրաքաղաքս գտնուող Սեբաստացի պանդուխտ ազգայնոց կողմէ նախընթաց որ պատգամաւորութիւն մը ներկայանալով Սեբաստիոյ նախորդ կուսակալ Խալիլ Բիֆաթ փաշայի, շնորհակալեաց գիր մը մատոյց Ն. Վսեմութեան բարւոք պաշտօնավարութեան համար։

Նորակազմ Դատաստանական Խորհրդոյ անդամներէն Օրաբեան Յարութիւն էֆէնտի հրաժարած է, սակայն Ս. Պատրիարք Հայրն չէ ընդունած նորա հրաժարականն։

Շապին Գարահիսարէն խմբագրութեանս ղրկուած քանի մը նամակներ յոյժ տխուր կերպիւ կը նկարագրեն տեղւոյն ազգային գործոց անկերպարան վիճակն։ Երկու երեք տարիէ ի վեր է որ ամէն ազգային գործունէութիւն դադար առած է, և ո՛չ թաղական խորհուրդ, ո՛չ վարչութիւն, ո՛չ կրօնական ժողով, ո՛չ հոգաբարձութիւն գոյութիւն ունին. եկեղեցին իսկ չունի օրինաւոր քահանայ և ո՛չ գրագրութիւն։ Դպրոցներն ալ ոչ ինչ նուազ տխուր վիճակ մ'ունին։ Եւ Առաջնորդ Հայրն, որ պարտի դարման տանիլ այս ամենուն, իւր անաղթեցիկ դրութիւն և անկարող ընթացքով եւս քան զեւս կ'ուժացնէ ժողովուրդն ամէն բանէ։ Այժմ Ներկայարեան Հայրն առանձնացած է ի Վանս Ս. Առաքելոյ ուր գիւղական դպրոց մը բացած է վանականներ պատրաստելու, մինչդեռ անդին ժողովուրդն անհովիւ կը մնայ։

Կեդրոնական Վարչութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք այս տողերուն վրայ։

Մայր Եկեղեցւոյ քահանայից դասէն ծերունազարդ Տ. Յարգիս հայրն վախճանեցաւ Նախընթաց օր և Օձման արարողութիւնն Այժմ. Ս. Պատրիարք Հայրն անձամբ կատարեց երէկ մեծ հանդիսիւ։

☞ Պրուսայի Սէօլեոզ գիւղէն մեզ ղրկուած նամակ մը յոյժ դժուտիւք կը խօսի տեղւոյն Ս. Հռիփսիմեան և Ս. Լուսաւորչեան վարժարանաց վերջին քննութեանց հանդէսներուն վրայ, թէեւ Պրուսայի այդ գիւղն անծանօթ է ամենուն, այլ նամակագիրը գովութեամբ կը յիշատակէ թէ գիւղացիք մեծ հոգ կը տանին իրենց զաւակաց կրթութեան. և այսպէս, մանչ աղջկայց վարժարանն՝ որ վեց վարժապետով և աղջկանցն՝ որ հինգ վարժուհիով կը կառավարուին, յոյժ բարեկարգ վիճակ մ'ունին, շնորհիւ մանաւանդ տեղւոյն անձնէր երիտասարդներէն ոմանցմէ կազմեալ Հոգաբարձութեան մը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեքշաբթի աւուր Նախարարաց Խորհրդոյ նիստը տեւեց մինչեւ գիշերուան ժամ 5։

Երէկ գարձեալ նախարարք ի ժողով գումարեցան ի Բ. Դուռն։ Թուէէ կը ծանուցանէ թէ նախարարք այս ժողովին մէջ երկու խնդրով զբաղած են. առաջին՝ անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Ուոլֆի հետ տեղի ունեցած բանակցութեանց պայմանագրոյ մը ներքեւ առնուիլն. և երկրորդ՝ Արեւելեան Ռումելիի խնդրոյն համար Եւրոպական տէրութեանց ղրկուելիք նոր ծանուցագրի մը պատրաստութիւնն։ Այս երկու խնդրոց մասին խորհրդակցութիւնք երէկ երեկոյ աւարտած լինելով, անգլիական պատուիրակին հետ պայմանագիրը պիտի ստորագրուի այսօր, ինչպէս նաև պիտի ղրկուի Եւրոպական տէրութեանց ուղղեալ ծանուցագիրն։

Թաղապետութեան երկրորդ շրջանակի անօրէն Թէվֆիք պէյ՝ Կղզիներու Դայմագամ անուանեցաւ և այս առթիւ Իւլպի երկրորդ ասպիսան տրուեցաւ նմա։

Կղզիներու Դայմագամ Մուսթաֆա պէյ՝ Թաղապետութեան երկրորդ շրջանակի անօրէն անուանեցաւ։

Գերմանական դեսպանատան առաջին թարգմանն երէկ Բ. Դուռն երթալով, երկու ժամու չափ տեսակցեցաւ Արտաքին գործոց Նախարարի խորհրդական Տատեան Վսեմ. Յարութիւն էֆէնտիի հետ։

Աթէնքի Նորընտիր օսմանեան դեսպան Ակահմ էֆէնտի բաւական ապաքինած է բայց մի քանի օր եւս մայրաքաղաքս պիտի մնայ. այժմեան դեսպան Թէվֆիք պէյ մինչեւ իւր յայտնին ժամանումն անդ մնալով իւր պաշտօնը պիտի շարունակէ առժամապէս։

Անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Ուոլֆ երէկ Բ. Դուռն երթալով, Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Նախարար Վսեմ. Սայիտ փաշայի և խորհրդական Տատեան Վսեմ. Յարութիւն էֆէնտիի հետ տեսակցեցաւ և միանգամայն իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանեցաւ։

Ըստ Թուրք լրագրաց, մեծ տէրութեանց մէկ քանին Դեսպանախորհրդոյ գումարման կողմն են, իսկ Անգլիա, Ֆրանսա և Իտալիա ծանուցած են թէ Դեսպանախորհուրդ գումարել այն ատեն միայն կարելի է երբ Պալքանեան Թերակղզւոյն խնդիրը լուկ առարկայ լինի այս գումարման և ոչ ուրիշ բան։

Վեհ. Սուլթանն բժշկապետ և արքունի հիւանդանոցներու ընդհանուր քնինիչ Վահէմ Մավրոկէնի փաշա երէկ Սպարապետի հիւանդանոցն այցելելով, անդ տիրած կանոնաւորութեան և մաքրութեան վրայ գոհունակութիւն յայտնեց։

Երէկ ծանուցինք թէ անգլ. արտասովոր պատուիրակ Սըր Ուոլֆ երեքշաբթի գիշեր կայս. պալատը ճաշեց ուր յատկապէս հրաւիրեալ էր Վեհ. Սուլթանի կողմէն։

Աւասիկ քանի մը մանրամասնութիւններ այս ունկնդրութեան մասին։

Երեքշաբթի իրիկուն, ժամ 11 ին միջոցները, Սըր Ուոլֆ բաց կառաջ մեկնեցաւ Բերայէն ընկերակցութեամբ իւր քաղաքական թարգման Պ. Մարինիչի, և Եըլտըզ գնաց։ Պալատն առջեւ, կառքէն իջնելուն, Թագուհւոյն պատուիրակն ընդունուեցաւ արարողապետ Միւնիր փաշայի կողմէ և մասնաւոր սրահի մը մէջ քիչ մը հանգըստանալէ յետոյ, պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու։ Ն. Վեհափառութիւն յոյժ սիրալիր ընդունելութիւն ըրաւ Սըր Ուոլֆի։

Ապա սեղան նստան, որ բոլորովին մասնաւոր հանգամանք մ'ունէր և բաց ի Սըր Ուոլֆէ, Պ. Մարինիչէ և պալատական չորս բարձրաստիճան անձերէ, ո՛չ ոք ներկայ էր։ Ճաշի ժամանակ Վեհ. Սուլթանը սիրալիր կերպիւ տեսակցեցաւ Սըր Ուոլֆի հետ և սեղանէն յետոյ մասնաւոր ունկնդրութիւն մը շնորհեց, որ տեւեց իւր երկու ժամ. խօսակցութեան առարկայ էր բնականաբար այն կարեւոր խնդիր որ տեղի տուած է Սըր Ուոլֆի արտասովոր պատուիրակութեան։

Առանց ծանրանալու մանրամասնութեանց վրայ, սա չափն յայտնի է թէ, կըսէ Էյէնտէյ, Սըր Ուոլֆ մեծապէս գոհ մնացեր է այն ապահովութիւններէն զորս տուեր է նմա Վեհ. Սուլթանն և թէ այս ունկնդրութիւն մեծ քայլ մ'առնել տուած է եգիպտական խնդրոյն վրայ կատարուած բանակցութեանց։

Սըր Ուոլֆ Բերա վերադարձաւ գիշերուան ժամ 3 ին միջոցներն, ուղեկցութեամբ քանի մը արքունի հեծելազօրաց։

Անգլիական պատուիրակն երէկ գիշեր Թարապիոյ դեսպանատան մէջ ներկայ գտնուեցաւ սեղանի մը զոր առաջամեայ դեսպան Սըր Հուայդ Պրուսաւ ի պատիւ Ն. Վսեմութեան, և այսօր, միջօրէէն յետոյ, ընկերակցութեամբ իւր բոլոր ուղեկցաց, Իտալիոյ շրջեցելը կը նստի մինչեւ Պէշիքա երթալու համար ուստից Իէնս մարտնաւը պիտի փոխադրուի Ալէքսանդրիա ուղեւորելու համար։

Մայրաքաղաքէս մեկնելէ առաջ, Սըր Ուոլֆ անգամ մ'եւս պատիւ պիտի ունենայ այսօր Վեհ. Սուլթանին ներկայանալու, իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելու համար։

Ընդհանուր տոյգ աղբիւրէ կ'իմանայ թէ Անգլիական դեսպան Սըր Հուայդ Պրուսաւ օր Բ. Դուռն երթալով, Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշային հաղորդեր է Լորտ Սալիզպըրի կողմէ ուղղեալ ծանուցագրի մը պատասխանութիւնն։

Այդ ծանուցագրով, Թագուհւոյն Նախարարապետը կը յայտարարէ թէ գարմացմամբ լսած է որ այս օրերս ի Ներքոյթ իւր արտասանած մէկ բանախօսութիւնը չարամիտ մեկնութեանց առարկայ եղած է, որը Թուրքիոյ և Անգլիոյ միջեւ կեցած բարւոք յարաբերութիւնները խանգարելու բնութիւն ունի. թէ այդ բանախօսութիւն փոխոխուած է և Օսմ. կառավարութեան ցանուց անհնարաւոր կերպիւ ցոյց տրուած. թէ ինք՝ Սալիզպըրի Մարքիզն՝ երբէք չէ ունեցած և չէ կրնար ունենալ ամենափոքր գաղտիար մը, կամ Օսմ. Դայսրութեան վերաբերեալ իրաւանց և ուղղամտութեան. թէ, վերջապէս, ներկայ յայտարարութենէն տարբեր իմաստ պարունակող զրոյց և տեղեկութիւնք անհիմն պէտք է նկատուին։

Անգլիոյ նախարարապետին այս յայտարարութիւն յոյժ լաւ տպաւորութիւն ըրած է Պոլսոյ քաղաքական շրջանակաց մէջ և Սայիտ փաշա խնդրած էՍըր Հուայդէ որ այս առթիւ կայսրութեան շնորհակալութիւնն յայտնէ առ Լորտ Սալիզպըրի։

Պուլկարաց Գերագոյն Էկզարքը թողլով Սեծ Կղզիի ամարանոցն, իւր Օրթագիւղի բնակարանը փոխադրեցաւ։

Տեղական թերթ մը յունական Ազգ. լրագրէն առնելով կը հրատարակէ հետեւեալն։

Զենք կրնար ըմբռնել թէ ինչո՞ւ համար մեր պաշտօնակիցներէն ոմանք կ'պնդեն հաստատել թէ, կրկէսցիք մութիւն հռչակած են ընդ Յունաստանի, և թէ գումարուումներ տեղի կունենան ի Լէվքա-Օրի, հակառակ հերքմանց այնպիսի անձանց որք գիտեն ճշմարտութիւնը։

«Այս հրատարակութիւնք մեծապէս կը վնասեն մեր շահուց և ծանր պատասխանատուութեան ներքեւ կը թողուն զանոնք որք այս տեսակ անհիմն զրոյցներ կը հնարեն»։

Վերջին թղթաբերով առնուած եւրպական լրագիրք կարգ մը լուրեր հրատարակած էին որք կը վերաբերին Սերեի մէջ տեղի ունեցած անցից։ Մինչեւ իսկ կըսէին թէ կղզւոյն Ընդհանուր ժողովոյ քրիստոնեայ երեսփոխանք հաւաքուեր են ի Պուլսնարիա, թաց ներկայ վիճակին առՁեւ ինչ ինչ առաջարկութիւններ տալու համար։

Հանրայէն հասած նորագոյն տեղեկութիւնք բացարձակապէս կը հերքեն այս անհիմն լուրերը։

(Մանիսա Օրէնթալ)

Գերմանական և իտալական դեսպանք երէկ ուշ ատեն Բ. Դուռն երթալով, տեսակցեցան Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշայի հետ։

Պուլկարիոյ Գերագոյն Նախարարապետն՝ Պ. Էմմանուէլ Բաթերաքի որ մայրաքաղաքէս անդ գնացած էր, շրջենաւէն երեւելուն պուլկար իշխանութեանց կողմէ ձերբակալուելով պատերազմական ատեանի մը յանձնուեր է։

Կերեւի թէ Պ. Բաթերաքի վերին աստիճանի մատնութեան մ'ամբաստանութեան ներքեւ կը գտնուի։

Կը հաւատան թէ Սերպիա բողոքած է մեծ Տէրութեանց ոչ-եսասանութիւն կողմէ Բ. Դրան տրուած վերջին պատասխանագրոյն դէմ, որոյ մէկ օրինակն ևս հաղորդուած էր Պելկրատի Դահլիճին։ Այս վերջինը կը յայտարարէ թէ լիւեալ ծանուցագրոյն պարունակութիւնը պուլկարական խնդրոյն վերջնական լուծումմ մը չընծայէր, որով Սերպիա կրնայ գեւ երկար ժամանակ անտոյգ վիճակի մէջ մնալ, իւր հետեւելիք ընթացքին նկատմամբ։

Պելկրատէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ սեպտ. 17 և 18ի գիշերները կառավարութեան տպարանը բաց մնացեր է մինչեւ առաւօտ, յոյժ տիպողական աշխատութեան մը համար։ Վարժ և վստահելի գրաշարք աշխատեր են, Աւետարանի վրայ երդումն ընելով թէ իրենց շարածին գաղտնիքը պիտի պահեն։ Սակայն լաւատեղեակ ակմրոց մէջ չրջող զրոյցներու նայելով, Միլան թագաւորին կողմէ սերպ ժողովրդեան ուղղելի յայտարարութիւն մը և բանակին ուղղուելիք հրամաններ են որ կը տպուին։

Բայտնի է թէ Արեւ. Ռումելիի և Պուլկարիոյ մէջ լրագրաց հրատարակութիւնն արգիլուած է այս պահուս, պաշարման վիճակին պատճառաւ։ Սակայն Պուլկարիոյ նախարարապետ Պ. Քարավէլովի թոյլ տուած է որ շաբաթական հրատարակուիլ ի Սոֆիա՝ արտատական կուսակցութեան բերան եղող ԹէնՎէտ Քանրէ-ԲէնՎէ լրագիրն, որ յառաջագոյն 400 բաժանորդ միայն ունէր և այժմ 30,000 օրինակ աւելի կը տպէ։

Մանրեօր ծանուցանելով դաս, դիտել կուտայ թէ աւելի Սոֆիայի և Փիլիպէի պաշտօնական լրագիրք պէտք է վայելէին այս տեսակ բացառութիւն մը քան Պուլկարիոյ նախարարապետին թերթը։

Էյէնտէ կ'ըսէ թէ Ալէքսանդր իշխանը Փիլիպէէն Սոֆիա երթալով, աւելի ուրիշ պարտականութեան մը հնազանդած է քան տերութեանց հրաւէրին, որ իրեն հասած չէ եղեր արդէն։

Մոսքվայէ Վերոնեժի լրագրոյն տնօրէն հռչակաւոր Թաթ.քոֆ՝ Մոսկուայէն մեկնած է Սոֆիա և Փիլիպէ երթալու համար։ Այս ուղեւորութիւն մինչեւ մէկ տարեկան կրնայ իւր կարեւորութիւն ունենալ, նկատելով ռուս հրապարակագրին յարաբերութիւններն Պուլկարիոյ արմատականաց հետ մանաւանդ այն ատելութիւն զոր ցոյց կուտայ Ալէքսանդր իշխանին նկատմամբ։ Պ. Թաթ.քոֆ վերջերս Իշխանին վրայ խօսելով կոչած է զայն «բաղդախնդիր մը» զոր ամէն պարագայի մէջ հարկ է վանել «վտահելի անձ մը» նմա յաջորդ կարգելու համար։

Աթէնքի ժողովրդեան ոգեւորութիւնն օր աւուր կաւելնայ։ Տեղական Ազգ. Ա. ԱԲԵԼ. Լ. ՊՐ. ՈՐ. Ս. լրագիրն կը հրատարակէ Հելլենաց հայրենասիրութեան քանի մ'օրինակներ։

Միտիլիի յոյն բնակիչք 20,000 ոսկի հանգանակեր են, զոր հելլենական կառավարութեան պիտի ղրկեն պատերազմական պատրաստութեանց գործածելու համար։ Պրայլացի Պ. Ֆիլիթիս յայտարարած է թէ իւր բոլոր գոյքն Յունաստանի կը նուիրէ, յօժարելով մուրալ, «բաւական է որ արժանի մնայ հելլէն անուան»։ Ալէքսանդրիայէն Պ. Քիրիաս 2500 ֆրանք տրուած է։ Աթէնքի մէջ Թէրզաքի անուն նպարավաճառ մը խոստացած է ամէն ամիս 500 ֆրանք նուիրել պատերազմական նախարարութեան։ Բաֆիօքուլօ անուն նաւատէր մը խնդրած է որ հրամանատար կարգուի ծովառմբակիր նաւու մը, որոյ նաւատիները լինին իւր երեք որդիք։ Այս մարդ միանգամայն կառավարութեան կը թողու իւր բոլոր հարստութիւն՝ 10,000 ֆր։

Ի մի բան յունական թերթերու բոլոր էջերը լի են նմանօրինակ հայրենասիրական նուիրատուութեանց յիշատակութիւններով։

Արեւ. երկաթուղեաց ընկերութեան Ադրիանուպոլսոյ և Փիլիպէի գծերուն օսմանեան պատուիրակ Էֆատ էֆէնտի, որ Արեւելեան Ռումելիի վերջին դէպքերու միջոցին Պուլկարաց կողմէ ձերբակալուելով քսան երեք օր բանտարկուած էր, բաւական դժուարութեամբ Փիլիպէէն մեկնելով մայրաքաղաքս եկած է։

Նեսլոյս իւր երէկի թուով ծանուցած էր թէ Սերպիացւոց Զայչարի կողմէն Պուլկարիոյ սահմանագլուխն անցած լինելնուն մասին Բ. Դրան տեղեկութիւն հաղորդուած է, բայց թուրք լրագիրք կ'ըսեն թէ մինչեւ երեկոյ այս մասին պաշտօնական տեղեկութիւն մը չէ հասած։

Հաշիշիի մէջ կը կարդանք.

Անցեալ ամսոյ 22ի գիշերը, ժամը կէսին միջոցները, պուլկար ապստամբ Արեւելեան Ռումելիի չրջակայքը գրաւուած Այսոս գիւղաքաղաքի Դարաւոնը կոչուած գիւղն երթալով, Եօնաս Փէշլիվան անուն Իսլամի մը տունը կը մտնեն և խեղճին վրայ յարձակելով թէ՝ զինքն և թէ՝ իւր զաւակն ու փեսայն անգթօրէն կ'սպաննեն։

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՖՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԻ

ԶԻԿ-ԶԱԿ ԿԱՄ ԿԵՌ-ԲՈՒԹԱՄԱՏ

Ա.

Կ'ուզէր փակել աչերն և չէր կրնար։ Այն սեւ կէտ կը շլացնէր զայն։

Թաւատեւ թաթերով գինեալ ահագին սարդի մը կը նմանէր, անշարժ կեցած։

Արդեօք հրէշ գազանի մը ճիրա՞ն էր։ Քամիլլ երկչոտ չէր, և սակայն զգաց որ արիւնը կը սառէր երակներուն մէջ։

Մոնիթրոլ, որ կրնակը դրան դարձուցած էր, իւր գծագրութիւնը կը շարունակէր եռանդով։

Ուշադրութեամբ նայելով, վերջապէս աղջիկը վարագուրին վրայ խղբեալ ձեռքի մը հինգ մատներն համրեց, որք խեշափառի մը ճանկերուն պէս երկայն և կոր էին. մանաւանդ բութմատը, միւս մատներէն ընդարձակապէս բաժնուած, տարապայման երկայնութիւն մ'ունէր, և անգամ մը մարդիներուն նման կոր եղունգով մը կ'աւարտէր։

Նոյն միջոցին, Քամիլլ, երկու վարագոյրներուն թերաքաէն շողղուն փայլ մը տեսաւ, զոր դաշոյնի մ'եկեթին շողփնը կարծեց։

—Հայրի՛կ, օգնութի՛ւն, գոչեց ձեռքը դէպ ի դուռն երկնցնելով։

Այս ոնակնիալ ձայնը լսելուն պէս Մոնիթրոլ ետին դարձաւ, բայց ժամանակ չմնաց ոտքի վրայ ելնելու։

Մէկ ոստմամբ – վագրի ոստմամբ – ճաշարանին մէջ պահուրտած մարդը վրան ցատկեց։ Ձեռք մը, այն վիթխարի ձեռքը, զոր Քամիլլ տեսած էր, պանդուխտներուն ծարին վրայ իջաւ. միւսն ալ դժբաղդ հոնարիչը փողէն բռնեց, որ դիմադրելու աշխատելով կանգ կրնար տնել։

Քամիլլ իւր հօրն օգնութեան դիմեց, բայց զողն աջացի հարուած մը տալով ի գետին թաւալեց զայն։

Աղջիկը չվնասեցաւ, ուժն ամիսիելով ոտքի վրայ ելաւ։ Բայց դանդիքը խոր մութի մէջ ընկղմած էր։ Ոտից գոտիներ, խանչիներ կը լսէր, բայց բան մը չէր տեսներ։

Նախ սեղանին զարնուեցաւ, և հարկ եղաւ արգելքին քովին դառնալ չարագործը բռնելու համար, որ դիւր հարն ընկճելու կ'աշխատէր. ջանց անոր զգեստներուն կառչիլ, բայց չկրցաւ բռնել։ Իւր մատները սահեցան ողորկ կերպասի մը վրայէ, յեսոյ փոքրիկ խորտուբորտեր հանդիպեցան մատներուն, զորս կը կորզէր իւր եղունգներով առանց կարենալ բռնելու չարագործն, որ օձակման պէս կը սահէր իւր ձեռաց մէջէն։

Զէր զարներ իրեն, այլ կը ջանար լմնցընել զՄոնիթրոլ և պանքտամներն առնուլ փախչիլ։

Երկար չտեւեց, Մոնիթրոլ տապատ ընկաւ։ յայնժամ չարագործը զայն թողլով ցատկեց ոտքի վրայ ելաւ և փախչիլ ըսկրսաւ։

Իւր նպատակին հասած էր։ Քանի հազար Ֆրանքը ձեռքն էր, և միայն փախչելու փոյթ ունէր՝ առանց աղջիկն ալ սպանելել փորձելու, զոր անկարող կը կարծէր իւր եռեւէն վազելու։

Սակայն կը սխալէր։ Քամիլլ ենթադրելով որ իւր հայրը թմած կամ մարած էր, վասն զի ընկած միջոցին ձայն չէր հանած, և կորովի մարդ մ'ի գետին քարնուելով չմեռնիր, որչափ և ուժգին լինի հարուածն, և զողն ալ իւր կռուվներէն գատ զէնք չունէր,

—Առ իս, հայրի՛կ, գոչց, չկրնար պլբոծիլ մեր ձեռքէն։

Եւ սկսաւ վազել չարագործին ետեւէն, որ արդէն վար կ'իջնէր սանդուղէն։

Դռնէն դուրս ելաւ, զոր բաց թողած էր, վազեց անցաւ դուրսի բաց դեռնին, և շերտափակին վրայէ ցատկելով փողոցն ելաւ և Պուլվար չոթէրէն դէպ ի Թրոնի հրապարակը դիմեց։

Քամիլլն ուրծն այս էր։ Կ'ըսէր ինքնիրեն թէ անչուշտ քաղաքապահ գինուորներ պիտի գտնէր հրապարակին վրայ, ուր ասնամանամբ խմբուած էր, և բռնել տար յանդուգն հրիկան։

Միայնպէսք էր հեռի չմնար անկէ։ Արդ, ինքը լաւ սրունք ունէր, և տխմար նախապաշարումներէ ազատ էր։ Հոգ չէր ըներ ձիւ պէս վազել փողոցներուն մէջ տնական հագուստով, սեռեկի մուճակներով, և այս կերպարանքը երեւնալ ապուշ տեսնող մէ, որ խնդալ էր ամպարաց տաղաւարներուն և համեմատաց վաճառողներուն խանութներուն առջեւ։ Մոնիթրոլ փոքանակ իրեն գեղեցիկ օրիորդ մեծցնելու զան, կանուխէն վարժեցուցած էր իւր գործոն ինքնին տեսնելու։ Ցանը ծանոյութիւնն ու խոհեմութիւնը նա կատարելապէս սպասուհւոյ մը պէս պէտք եղած նպարեղէններն և այլ տնական պիտոյքը կ'երթար կը գնէր, և բանէ մը չէր վախնար, ոչ իսկ կնանիներէ, որք երբեմն խօսք կը նետէին իրեն։

Իսկ գողը բռնել ուզելուն դիմաւոր պատճառն ոչ թէ 20,000 Ֆրանքին կորուստն էր, որում մեծ կարեւորութիւն չէր տար, այլ վասն զի հարն այդ ստակին պէտք ունէր կատարելագործելու համար իւր գիւտն, որոյ վրայ հիմնած էր գիւր բոլոր յոյս։ Կը յուսար կորզել զայն գողին ձեռքէն և հօրը վերադարձուցել, առանց խորհելու թէ աւելի լաւ կ'ընէր խնամ տանիլ իւր հօր, քան թէ անոր փոքրիկ հարստութիւնն ազատելու համար հեռանալ քովէն։ Կ'երեւակայէր իսկ թէ հարն արդէն ոտքի վրայ ելնելով իւր եռեւէն դուրս ելած էր, և պիտի հասնէր միանար իւր հետ չարագործը բռնելու համար, զոր չէր վրիպեցներ իւր աչքէն, թէ և իրմէ աւելի արագ կը վազէր։

Անձրեւը դադրած էր, և ասնամանաներն դատարկայածներն որք անձրեւի միջոցին յարկերու մէջ ապաստանած էին, նորէն Թրոնի հրապարակը խռնեալ էին։ Գաղատաւորները կը գոռային, դժոխային ժխոր մը, որոյ մէջ չէր կրնար լսուիլ իւր ձայն, եթէ «բռնեցէք գողը» գոչէր։

Մարդը կը փախչէր միշտ, և ամէն անգամ որ գապի լապտերի մը առջեւէ կ'անցներ, Քամիլլ որոշապէս կը տեսնէր զայն։ հուժկու սրիկայ մ'էր, որչափ որ կարելի էր դատել, վասն զի գեղնորակ առաջիգ խեժէ թրթռոցի մը մէջ փաթթուած էր յատից ցգլուխ։

Քամիլլ կը հասկնար այժմ թէ ինչո՞ւ չէր կրցած բռնել զայն, բայց չէր հասկնար թէ ինչո՞ւ համար մատները սկրդեր էին երբոր կառչիլ ուզեր էր։

Բայց յետաստիայեաց մեկնութիւններ փնտռելու ժամանակ չէր։ Մարդը Թրոնի հրապարակն հասած էր, և փոխանակ դէպ ի կեդրոնը դիմելու, որպէս զի խառն մէջ անհետանայ լինէր, ձախակողմ դարձած էր տախտակեայ մեծ տաղաւարի մ'ետին, Քամիլլ, բաւական ճանրայ առած լինելով, մոտեցած էր չարագործին։ Քաջաբար այն մութ և ամայի խորշին մէջ նետուեցաւ առանց խորհելու թէ գողը կրնար պինդն ըսպասել անդ, և իւր վրայ ընկնելով վիզն ոլորել։ Այս բանէ կրնար վախցուիլ մանաւանդ սա պատճառաւ որ չարագործը կանգ առնելով կրնակը տաղաւարին տախտակներուն տուած էր իրր պատրաստուելու համար որ իւր մատէն անցած միջոցին վրան յարձակէր։ Բայց Քամիլլ շատ յառաջացած լինելով չէր կրնար ընկրկիլ։

—Ա՛, չարագո՛րծ, չես կրնար ազատիլ

Պուլկարիոյ արմատականաց հետ մանաւանդ այն ատելութիւն զոր ցոյց կուտայ Ալէքսանդր իշխանին նկատմամբ։ Պ. Թաթ.քոֆ վերջերս Իշխանին վրայ խօսելով կոչած է զայն «բաղդախնդիր մը» զոր ամէն պարագայի մէջ հարկ է վանել «վստահելի անձ մը» նմա յաջորդ կարգելու համար։

Աֆէնքի ժողովրդեան ոգեւորութիւնն օր աւուր կաւելնայ։ Տեղական Ազգ. Ա. ԱԲԵԼ. Լ. ՊՐ. ՈՐ. Ս. լրագիրն կը հրատարակէ Հելլենաց հայրենասիրութեան քանի մ'օրինակներ։

Միտիլիի յոյն բնակիչք 20,000 ոսկի հանգանակեր են, զոր հելլենական կառավարութեան պիտի ղրկեն պատերազմական պատրաստութեանց գործածելու համար։ Պրայլացի Պ. Ֆիլիթիս յայտարարած է թէ իւր բոլոր գոյքն Յունաստանի կը նուիրէ, յօժարելով մուրալ, «բաւական է որ արժանի մնայ հելլէն անուան»։ Ալէքսանդրիայէն Պ. Քիրիաս 2500 ֆրանք տրուած է։ Աթէնքի մէջ Թէրզաքի անուն նպարավաճառ մը խոստացած է ամէն ամիս 500 ֆրանք նուիրել պատերազմական նախարարութեան։ Բաֆիօքուլօ անուն նաւատէր մը խնդրած է որ հրամանատար կարգուի ծովառմբակիր նաւու մը, որոյ նաւատիները լինին իւր երեք որդիք։ Այս մարդ միանգամայն կառավարութեան կը թողու իւր բոլոր հարստութիւն՝ 10,000 ֆր։

Ի մի բան յունական թերթերու բոլոր էջերը լի են նմանօրինակ հայրենասիրական նուիրատուութեանց յիշատակութիւններով։

Արեւ. երկաթուղեաց ընկերութեան Ադրիանուպոլսոյ և Փիլիպէի գծերուն օսմանեան պատուիրակ Էֆատ էֆէնտի, որ Արեւելեան Ռումելիի վերջին դէպքերու միջոցին Պուլկարաց կողմէ ձերբակալուելով քսան երեք օր բանտարկուած էր, բաւական դժուարութեամբ Փիլիպէէն մեկնելով մայրաքաղաքս եկած է։

Նեսլոյս իւր երէկի թուով ծանուցած էր թէ Սերպիացւոց Զայչարի կողմէն Պուլկարիոյ սահմանագլուխն անցած լինելնուն մասին Բ. Դրան տեղեկութիւն հաղորդուած է, բայց թուրք լրագիրք կ'ըսեն թէ մինչեւ երեկոյ այս մասին պաշտօնական տեղեկութիւն մը չէ հասած։

Հաշիշիի մէջ կը կարդանք.

Անցեալ ամսոյ 22ի գիշերը, ժամը կէսին միջոցները, պուլկար ապստամբ Արեւելեան Ռումելիի չրջակայքը գրաւուած Այսոս գիւղաքաղաքի Դարաւոնը կոչուած գիւղն երթալով, Եօնաս Փէշլիվան անուն Իսլամի մը տունը կը մտնեն և խեղճին վրայ յարձակելով թէ՝ զինքն և թէ՝ իւր զաւակն ու փեսայն անգթօրէն կ'սպաննեն։

(Շարունակելի)

Նախաբարաց Խորհուրդը՝ մեքենայ ունեցող նաւակներով սպունգ որսալու արգելքը բոլորովին ջնջած լինելով, ներքին գործոց նախարարութիւնն այս որոշումն հաղորդեց, հանդերձ մանրամասնութեամբ, Արշիպիլագոսի, Սուրիոյ, Այգեպտոսի, Ափրիկեան Տրիպոլսոյ և Պէնկազիի կառավարիչներուն։

Բերայի և Թարապիոյ ֆրանսական դեսպանատանց չէնքերը կայս. կառավարութեան կողմէ ֆրանսական կառավարութեան տրամադրութեան ներքեւ դրուած են, պայմանաւ որ Ֆրանսա ևս հոգայ Փարիզու օսմանեան դեսպանատան չէնքն։

Լաֆիթ փողոցի ապարանքին վարձակալութեան պայմանաժամը լրացած լինելով, Ֆրանսայի արտաքին գործոց Նախարարն՝ Էսատ փաշայի հետ հաւանութեամբ՝ վարձած է ուրիշ նոր չէնք մը ի Բրէսպուրկ փողոց ուր պիտի փոխադրուի Փարիզի օսմ. դեսպանատունն։

Պ. Թոմաս Սթիվընս ամերիկացին, շրջանն ընելու ձեռնարկած է, Դարբէժ հաներ է։

Պ. Սթիվընս կը գրէ թէ տեղացիք շատ կը զարմանան իւր արագոտնին վրայ. քաղաքներու մէջ, հանրային ճամբաներու վրայ, ժողովուրդը կը խնդրէ իրմէ որ արագոտնով ընթանայ. քաղաքին երեւելեաց առջեւ։ Էնկիւրիի, Եզդատի և Սեբաստիոյ մէջ հարկ եղեր է ոստիկանաց միջամտութիւնը խնդրել, ճամբայ ռանալու համար բաղմութեան որ ամենուրեք կը խռնէր զինքը տեսնելու։ Այս տարօրինակ Ամերիկացին կ'ուղեւորէր առանձին։ Մէկ անգամ միայն յարձակում կրեր է գողերէ, բայց կրցեր է խուսափիլ անոնց ձեռքէն։

Հոկտ. 7 թուով Ազդրմանոլոյսէն հետեւեալը կը գրեն առ Սասդէն։

Արեւ. Բուսէրիէն եկած տեղեկութեանց նայելով, Պուլկարք սկսած են համախմբուիլ սահմանագլխին վրայ։ Կ'ըսուի թէ Պուլկարաց ամբոխ զօրագունդը Սոֆիայէն ի Փիլիպէ կուգայ, նոյնպէս թէ Աղեքսանդր իշխանն Հարմանլրի շրջակայքն եկած է և զինուորական զօրութիւններն աչքէ կ'անցընէ։ Կիւրակէ գիշեր Վառնայէն 3000 ի չափ կամաւոր Պուլկարք ԱՀ Եօլու հասած են և անտի Եսմպօլուի կողմերը պիտի ղրկուին։ Պուլկարք բռնութեամբ խլեալաց և Ցունաց տուները կոխելով տարք և այլն կ'առնեն։

Արեւ. Բուսէրիի սահմանգլխին վրայ Վայոլի և Խանլը եէնիճէի կողմերը բաւական թուով օսմ. զօրքեր ղրկուեցան։ Նախընթաց երեկոյ Պոլսոյ երկաթուղիով ասա հասան Նիկոմիդիոյ պեհլեւանի զօրաց հրամանատար Սաատէտտին փաշա։ Ֆերիդ Մուսթաֆա Բեռազիմ փաշա ևս այս երեկոյ ասա կ'ըսպասուի։

Շերքէթի Խարիէի Ընկերութիւնն իւր գնած հանքածուլիին համար, Մովային Նախարարութեան 840,000 զրուշի հին պարտք մ'ունենալով, յիշեալ Նախարարութեան կողմէ երկու պաշտօնեայք Շերքէթի Իւկիւտարի կողմը երթեւեկող շոգենաւուց ամենօրեայ հաստոյթները գանձելու վրայ են։

(Թարքէք)

Աւստրիական Իլլոյ շոգենաւն երէկ Տրապիզոնէն 130 զինուոր բերաւ մայրաքաղաքս։

Կայս. կառավարութիւնը թուրք լրագրաց մէջտեղ պաշտօնապէս կը ծանուցանէ թէ մինչև մէկ տարի բարձրագոյն հրամանաւ արգիլեալ է ձիերու արտածութիւնն և թէ անոնք որ առաջուընէ ո՛և է պայմանագրութիւն ունին կրնան մինչեւ տասնև հինգ օր ձեռքերնին գտնուածներն արտածել։

ԼՈՒՐԵՐ ԱԴՐԻԱՆՈՊՈԼԻՆ

(Մէջ յատուկ Թղթակցէն)

ԱԴՐԻԱՆՈՊՈԼԻՍ 8/20 հոկտ.

Արեւ. Բուսէրիէն թէ ազատ անցագրով և թէ անծանօթ կիրճերէն փախչելով քաղաքս եկողներու թիւն օրէ օր կ'աւելնայ. ասոնցմէ քաղուած լուրերուն հաւնժամա, Պուլկարաց աշխատելու կարող արանց ամէնն ալ գրեթէ զէնքի տակ կը գտնուին. Պուլկարիայէն եկող զօրաց հետ միասին Բուսէրիի ի զէն կոչուած զօրաց թիւը 60,000կը հաշուի, որք կը գտնուին ընդհանրապէս Հարմանլը, Սէյմէնլի, Գավագը և Պուրկաս կոչուած գիւղաքաղաքաց սահմանագլխներն, ունենալով ընդամէնը 35–40 հազար թնդանօթք։ Ռումելիէն և Պուլկարիայէն եկող կամաւորաց ամէնուն ալ, Բուսէրի հասնելուն պէս զինուորական հագուստ և հրացան կը տրուի։ Առ այժմ Բուսէրիի մէջ գտնուող ռուս կամաւորաց թիւն 1000 ի կը հասնի, որք զատ գունդ մը կազմած են. զօրաց զինանշանները պուլկարական են, իսկ զէնքերնին Վինչիսթէր, Մարթինի և Պէրտանի հրացաններ։ Ռազմամթերաց գալով, այս զօրաց համար պահեստի մեծ քանակութեամբ փամփուշտ և վառօդ չգտնուիր, միայն թէ ամէն զօրաց վրայ կը տեսնուի 3/4 կարգ փամփուշտ (150 հատի չափ), հրացան մը, վեց հարուածեան մը և սուր մը։ Թէպէտ և հագուստներն, կոշիկներն նոր և լաւ վիճակի մէջ են, բայց ամենուին վրան չունին բնակելու համար և ձմրան մօտենալը տեսնելով շատ յուզեալ վիճակի մէջ կը գտնուին. զօրաց ուտեստի համար ալ զինուորական մատակարարութիւնը չատ նեղ վիճակի մէջ կը գտնուի և կառավարութեան գանձն ամենուին ստակ չունի, մինչդեռ մինչև հիմա առնուած ցորենեղինաց և այլ ուտելիքներու համար տրուած պարտամուրհակներն անվճար կը մնան. միւս կողմէ, նորէն վաճառականներ կ'ստիպեն ուրիշ նպարեղէններ ուսեալու համար, և կը վախցուի որ յառաջիկային ստակի նպատակներ ալ պիտի հանգանակին որուն ամէն ոք կամայ ակամայ պիտի ստիպուի մասնակցիլ. յիրաւի գիւղացիները կամաւոր նպատակներ կը հաստատեն, բայց այսքան բազմութեան չի բաւեր յատնի բան մ'է. եթէ այս գժբաղդ վիճակը ամիս մ'ալ տեւէ, Արեւ. Բուսէրիի հարուստ և բերրի նահանգին յետին տարեկան չքաւորութեան մէջ թողուիլը պիտի տեսնուի գժբաղդաբար. բայց քիչ մը կը քայլերիմը լսելով որ մշակութիւնը կանանց ձեռքով յառաջ կը տարուի. Պուլկար կանայք կ'ըսեն եղեր որ, մինչդեռ մեր ամուսինները եղբայրները և հայրերը զինուց կը ծառայեն, մենք որ զէնք չենք կրնար գործածել, գոնէ կրնանք մշակութիւն ընել և այսպէս մեր հայրենակցաց նպաստել. այսու երկրագործութեան շատ չմնասելը կը յայտնուի.

Հերոսուհեաց սոսկալի խումբն իրենց բոլոր ոյժը և շունչը կ'սպառեն, պաշտօն ունենալով հրաւէր կարդալ իրենց հայրենակիցներն ոտքի հանելը և կամաւորներ ժողվելով զանոնք քաջալերել. թէպէտ և թուով քիչ բայց ազդեցութիւնին շատ լինին ամենէն կը վկայուի։

Լսանենուս նայելով, Պուլկարիոյ Իշխանին Հարմանլը գալը միայն իւր զօրքերն աչքէ անցնելու համար չէ եղեր, այլ Մուսթաֆա փաշայի սահմանագլխոյն վրայ համախմբեալ օսմանեաց զօրաց քանակութիւնը և բռնած դիրքը հաստակելու նպատակու. Իշխանն հեռագրատակով զօրաց 5–6000 ճիշդ թիւ ունի բաղկանալն հաշուեր է։

—Քաղաքիս կայարանին քովը գտնուող պարապ բայց ընդարձակ դաշտը զինուորական մարզանաց յատկացուեցաւ և քաղաքս գտնուող զօրքերն ամէն օր վարժութիւն կ'քնեն անգ, ուր երկու սեռէ խուռն բազմութիւն գրեթէ միշտ ներկայ է մարզանքը դիտելու Հրամանատար Վսեմ. Թահիր փաշա ամէն օր զօրանոցները կ'այցելէ և զօրաց վիճակին վրայօք անձամբ տեղեկութիւն կ'առնու. երբեմն ալ մարզանաց ներկայ գտնուելով մէկերնին կը շրջէր և զօրաց շարժումները տեսնելով զանոնք կը քաջալերէր.

ԹՐԱՄՈՒԼԻՑԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Կը ծանուցուի Պոլսոյ Թրամուէյից ընկերութեան արժէթուղթեր ունեցողաց թէ 1885 Դեկտեմբեր 1ին ջնջելի 57 արժէթղթոց եօթներորդ վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ ի կեդրոնատեղին ընկերութեան, Ղալաթիա, Սաամ թաղ խան, 1885 Նոյեմբեր 2 երկուշաբթի օր, մէջօրեի ժամերը։

Տնօրէն
Ա. ԹՐԻՒԼԼ

Կ. Պոլիս
29 Հոկտեմբեր 1885

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

ԱԺԱՆՑ ՀԱՂԱՍ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Փարիզ, հոկտ.

Երեսփոխանական ժողովն ի նիստ հրաւիրեալ է յառաջիկայ Նոյեմբեր 10ին։

Հանրապետութեան նախագահն ընդունեց հրաժարականներն առևտրական նախարար Պ. Լէրիէի և երկրագործական նախարար Պ. Հէրիէ Մանկոնի, որք չվերընտրեցան երեսփոխանական ընդհանուր ընտրութեանց մէջ։

Խմբագիրս, 21 հոկտ.

Հոկտեմբեր 14էն մինչեւ 20 Սուէզի ջրանցէն անցած են 83 նաւ և տասնօրեայ հասոյթն է 1,520,000 ֆրանք։

ՓՈՐԹՍՄՈՒԹԻ ԳԱԼԱԹԻՈՅ ԳՈՐՍ

Ղալաթիա, 9 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓԱՅԼԱՆԱԿԱԳՐՈՒՑ

5 տարիս Լ. Հնարարի վրայ պարբերական)	108 3/4
3 » » » (վճարելի)	108 3/4
3 » Բարի, » (պարբերական)	23 20
3 » » » (վճարելի)	23 30

ԸՆԹԱՑՔ ԱՐԱՒԵԼԵՑԻ Օսմանեան Թօհնօպլատ

	Գներկա
Նրեկ երեկոյ գոց. (Մխաց. D. Ռէյդ Գ. Կ.	15 11/16
Գրաստին գոցուելէն վերջը »	15 11/16
Բերայի մէջ » »	— —
Լաւագոյն բացում եղաւ	15 11/16
Բարձրագոյն գին	15 11/16
Նուազագոյն »	15 11/16
Կէս օրին	15 11/16
Գոնարուութիւն 1858) A. Ռէյդ	2
» 1862)	
» 1860)	
» 1863) B.	115
» 1872)	
» 1865)	
» 1869) C.	115
» 1873)	

ԻՒՆԻՖԻԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երեկ երեկոյ գոցուեցաւ	71
Այս առաւ. բացուեցաւ Գ. Ի.	70
Կէս օրին	70

ԲԱԳԴԱԴԵՍՏԱՆԻ

Ասիէ Դէ Լեվանտ Գ. Կ. Ազդ. Լ.	—
Արշամի Լիմանեաց » » Օսմ. »	6 1/4
[illegible]	—
Սամ. Հանած է վաղէօր. » » » »	—
Դարմանէ » » » »	277 1/4
Ռումելիի երկաթուղի Ֆր.	34 75
Օպլիկասիոն որ Բրիօրիթէ »	—
Ռանենթուղթ Լատիսմի »	56

ԸՆԹԱՑՔ ԳՐԱՄՈՒ

Օսմանեան ոսկի	Գրշ.	100
Ֆրանկոնոց	»	87 30
Եգիպտական ոսկի	»	110 1/4
Ոչ խմբագրեալ	»	90 1/4
Բրիմիոց	»	51 1/4
Դուպլի Թղթադրամ	»	9 2/4
» արծաթ	»	89 2/4
Ֆիորին	»	8 3/4
Գրեչ. արծ. (տարբ.)	»	108
Վենետոց	»	102 3/4
Լիոնոց	»	102 2/4
Գրեչ ոսկի	»	98
Պրուսիա	»	—
Գոլեմ.	»	—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 21 Հոկտեմբեր, ժամ 5 վաղ.	15 1/16
Ընդ. գանձարան	100
Ոսկի. Վերի Գ. բացուեցաւ	14 1/16
» » » գոցուեցաւ	14 1/8
» » » Ա.	27 1/2
» » » Բ.	15
» » » Գ.	14 1/8
Օթոման 1871	66
Փոխառութիւն 1877	78 1/4
Պանք Օթոման	10
Դուսական փոխառ. 1873	94 1/2
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	64 1/2
» առանձն. (բրիմիէրէթ)	85 1/3
Տարբա Ոանիէ	59 1/2
Տօմանիալ (փոխառ. Բարձր)	86 1/2
Հանգարտական պարտաթուղթ 4 0/0	— —
Ոսմանանութիւն Բարձրի վրայ	25 1/4

Վիէննա, 21 Հոկտեմբեր, ժամ 4 երեկ.

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	125 0
Օսմանեան երկաթուղի	18

Բարիզ, 21 Հոկտեմբեր, ժամ 3 վաղ. 45 երեկոյ

Ֆրանսական Լանթի 4 1/2 0/0	109 4
» » 3 0/0	80 32 1/2
Օսմանեան քօնսոլիտէ Վերի Գ. բացուեցաւ	14 32 1/2
» » » գոցուեցաւ	14 0
» » Վերի Բ.	16
» » Գ.	14 10
Օսմանեան երկաթուղի	36 35
» Բէգիի բանանթուղթ	— —
Պանք Օթոման	503 75
Լրէտի Լիոնէ	— —
» Ֆոնսիէ	1302 0
Բանանեաստ Լիոնի	1247 0
Սուէզի ջրանցք	2020
Իտալական 5 0/0 1877ի	100
Իտալական Լանթի	95 35 1/4
Եգիպտական միացեալ	326 25
Սպանիական (արտաքին)	56 1/8
Բրիօրիթէ Ֆոնդք	362 0
5 0/0 Հելլենական	292 0
Զէք Լոնտոյի վրայ	25 21

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 21 Հոկտեմբեր, ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Լանթի 4 1/2 0/0	109 36 1/4
Օսմանեան քօնսոլիտէ Վերի Գ.	14 15 (?)
Եգիպտական	325

ՊԱՐՈՆ ՇՈՒՊԼԱՆ

Բ. ԵՒ Վ. ԵՐՔՅԻՆ ՀԱՏՈՐ

Ֆրան երանակը կը մեռնոյ, և Եարբ Բօյ ազգ գրասենեցիչ և միհագամսի բարոյալիր գիրքն յարմար մինչ մ'ի գիշերային երկար ժամուց ձանձրոյթը մոռցնելու։ Արդարեւ, Բոլ ալ Բօք, իւլ այս վերին մէջ, իւր թեթեւ ու սահուն ոճով միշտ արթուն կը պահէ ընթերցողին հետաքրքրութիւնը։ Թարգմանիչն ալ, ընտրելով պարզ ու ժողովրդական աշխարհաբար, հաւասարած է հեղինակին ոճոյն։ — Վէպը մաքուր տպագրութեամբ և երկու հատորով ի լոյս ընծայեալ է Աշճեան տպարանէն։

Կը ծախուի բոլոր հայ գրավաճառաց քով։ Երկու հատորն ի միասին կը վաճառուին ի գին 10 զրուշ։

Ա Զ Դ

Ազգային բազմաչխատ ուսուցիչ մը որ երկար տարիներէ հետէ Պոլսոյ ազգային վարժարանաց շատերուն մէջ դասախօսութիւն ըրած և անոնցմէ մի քանիին մէջ եւս Տեսչութեան ու Տնօրէնութեան պաշտօն վարած է, և կարող է Դիտութեանց և Լեզուաց մէջ՝ ոմանց առաջին կարգի և ոմանց երկրորդ կարգի դասատուութիւն ընել, կը փափաքի այժմ ազգային վարժարանի մը մէջ իւր փորձառութեան արդիւնքը ցոյց տալ, հսկողութեան և միանգամայն դասատուութեան պաշտօններ ստանձնելով։

Փափագողք պէտք է դիմեն Աբեւելքի խմբագրատունը։

Տ. ԹԷՕՐ ՏՕՊՈՒԶԵԱՆ, հանրածանօթ բժիշկը, անգամ Ազգային բժշկական ճեմարանին, այս անգամ Օսմանէն վերադարձած և իւր բնակութիւնը հաստատած է ի Բերա, Պաղ փողոց, Թիւ 7ը տուրը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

ԱԲԵՒԵԼՔԻ

ՀԱՄՇԵՆՄԱՆ, սեպտեմբեր 24

Մեր պատմագիրք, որ մեծ մասամբ կղերական են, չեն գրած կամ չեն ուզած հայկական դիպարանութեան վերայ գրել, կամ պաշտամանց վերաբերեալ արարողութեանց մասին մեզ ծանօթացնել։ Մի քանի թափթփուք գրից անուններ եւեթ նշանակուած են, անոնք ալ ո՛չ իրը տեղեկութիւն, այլ իրը նախատինք։ Հայաստանի գեղեցիկ տեղի խնամք պահած են իրենց ծոց մեր հարց պաշտած սասուածներն։ Դերձանի ոտնմանները կը պարունակեն բազմաթիւ արձաններ եղեմի, նապատակի, խոզի, սիրամարգի եւ ուրիշ կենդանեաց զարդ մեր նախահարք կը պաշտէին։

Այս տարի արձակուրդին այցելեցի Ցաւրսի խարերը, Հալբոի վանք եւ անդ գտայ մի արձան պղնձի. մի մերկ աղջիկ, որ ունի գլուխը բարակ պակ մը և գագաթը երկու թեւ. հիւսուած ծամեր (մազ) երեք հատ եռեւէն՝ երկու ալ երկու կողմը ուսերն ի վար ձգած։ Ալ ձեռքը պնակ մը դէպ յառաջ երկնցուցած, որոյ մէջ կան նշանագրեր և ասագեր։ Ինք գրաւեալ՝ պնակին կը նայի, կարծես կը կարդայանդ մարգոյ բազդերը։ Իւս ձեռքը մարմնոյն ուղղութեամբը երկնցուցած և թեւաւոր օձ մը տուտէն բռնած է. օձը թեւն ի վեր կերկնայ. թեւերն ուսին վրայ կը տարածէ և գլուխը ծռած դէպ ի արձանը՝ պիշ պիշ կը նայի անոր. երեւի, այս օձ արձանին մի հրամանատար ապասաւորն է, որոյ թեւատարած և գէտ ոտն նայիր, անմիջական ծառայելու պատրաստականութիւնը կը յայտնէ։ Սոյն արձան ունի սքանչելի նրբութիւն և սեգ կեցուածք։ Նանէինք կը կարծուի այս արձան, որ ինչպէս Անահիտ ստրիկ եւալը, ազգային ասուած մ'է։

